ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.16. Ֆրանսիայի տնտեսությունը

• • •

Սեփական հումքի բազայի վրա Լոթարինգիայում, ինչպես նաև երկրի հյուսիսային և հարավային շրջաններում զարգանում էր ***սև մետաղաձուլությունը***: Սակայն այժմ ճյուղը զարգանում է ներկրվող խտանյութի և մետաղի ջարդոնի բազայի վրա: Քանի որ ***գունավոր մետաղաձուլությունը*** էներգատար է, ուստի այն կենտրոնացված է էժան ջրաէներգետիկ աղբյուրների մոտ՝ Ալպերում և Պիրենեյներում: Ալյումինից բացի արտադրվում է պղինձ, կապար, անագ և այլ մետաղներ: Ալյումինն հիմնականում օգտագործվում է ավիացիոն մեքենաշինության մեջ:

Մեքենաշինությունը Ֆրանսիայի արդյունաբերության առաջատար ճյուղն է, որը բնութագրվում է համաշխարհային ճանաչում ստացած ավտոմեքենաների, ինքնաթիռների, օդատիեզերական, ատոմային էներգետիկական սարքավորումների արտադրությամբ: Թողարկում է արագընթաց երկաթուղային շարժակազմեր (հայրենիքը Ֆրանսիան է), ծովային նավեր, ռազմական, էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային մեքենաշինության արտադրանք: Մեքենաշինության գլխավոր կենտրոններն են **Փարիզը**, **Լիոնը**, **Թուլուզը**, **Բորդոն**, **Մարսելը**, **Նանտը**:

• • •

Ագրարային սեկտորը Ֆրանսիայի տնտեսության համար ունի ավելի մեծ նշանակություն, քան Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում: Ֆրանսիան գյուղատնտեսական մթերքների խոշորագույն արտադրողն ու արտահանողն է Արևմտյան Եվրոպայում: Ճյուղի զարգացմանը նպաստել են բարենպաստ հողակլիմայական պայմանները, ինտենսիվության բարձրացումը, արտադրական մասնագիտացման խորացումը:

• • •

Երկրորդ աշխարհամարտից հետո տնտեսության զարգացման տեմպերն ու բնույթը փոխվեցին: Սկզբում այն կրում էր ինդուստրիալ, իսկ 20-րդ դ. երկրորդ կեսից՝ հետինդուստրիալ բնույթ: Արագ աճեցին մենաշնորհային գործընթացները, ուժեղացավ վերազգային մոնոպոլիաների դերը:

Ի տարբերություն Արևմուտքի շատ երկրների, Ֆրանսիայում պետությունը նույնպես խոշոր սեփականատեր է: Շատ բարձր է տնտեսության համակենտրոնացման և պետական հատվածի տեսակարար կշիռը: Տնտեսապես ակտիվ բնակչության 3/4-ից ավելին զբաղված է ծառայությունների ոլորտում, 18%-ը՝ արդյունաբերության և մոտ 2%-ը՝ գյուղատնտեսության մեջ:

• • •

Զարգացման բարձր մակարդակ ունի պոլիմերային նյութերի քիմիան: Պլաստմասսաների արտադրության ծավալով Ֆրանսիան աշխարհում առաջատարներից է: Նավթի ներկրման նավահանգստային քաղաքներում էլ զարգացած են նավթավերամշակումը և նավթաքիմիան:

Թեթև արդյունաբերությունը նույնպես համաշխարհային ճանաչում ունի: Այն մասնագիտացել է գործվածքների, նորաձև հագուստի, կոշիկի արտադրությամբ: Աչքի է ընկնում արտադրանքի բարձր որակով և շատ մեծ պահանջարկով: Ֆրանսիան նորաձևության «օրենսդիրն» է:

Արտադրանքի բազմատեսակությամբ, ծավալով աչքի է ընկնում ***սննդի արդյունաբերությունը***, որը արտադրանքի արժեքով զիջում է միայն մեքենաշինությանն ու քիմիական արդյունաբերությանը:

• • •

Ֆրանսիան Եվրոպայում առաջին տեղում է ավտոճանապարհների երկարությամբ (950 հզ. կմ): Այն երկու անգամ գերազանցում ՌԴ-ի ցուցանիշը և քսաներեք անգամ՝ հասարակածի երկարությանը: Գերակշռողը ավտոմոբիլային տրանսպորտն է: Նրա տրանսպորտային ցանցի ուրվագիծը հստակ արտահայտված ճառագայթային-շրջանաձև բնույթ ունի: Փարիզից են ճառագայթաձև ձգվում և Փարիզում են հատվում բոլոր հիմնական երկաթուղիները, ավտոմայրուղիները, խողովակաշարերը, օդային և ներքին ջրային ուղիները:

Տրանսպորտի ընդհանուր բեռնաշրջանառության մեջ նվազում է երկաթուղայինի բաժինը, կրճատվում է երկաթուղիների երկարությունը: Ավտոմոբիլայինի մրցակցությանը դիմանալու համար աճում է գնացքների արագությունը:

• • •

Ֆրանսիայի ***ծառայությունների ոլորտն*** աչքի է ընկնում ճյուղային և տարածական բարդ կառուցվածքով: Նրանում զբաղված է տնտեսապես ակտիվ բնակչության 8/10-ը: Ֆրանսիան ունի բարձր զարգացած *գիտակրթական և մշակութային համակարգ*: Առանձին համալսարաններ (**Սորբոնի**, **Թուլուզի**) ավելի քան 800 տարեկան են: 1983-ից, աշակերտների ցանկությամբ և կառավարության որոշմամբ Ֆրանսիայի մի շարք դպրոցներում դասավանդվում են հայոց լեզու, հայ մշակույթ: